ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքը Ապրիլի 7-ի առթիվ

Սիրելի կանայք, մայրեր, քույրեր

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, մաղթում առողջություն, կանացի երջանկություն, մայրական բերկրանքի բազում պահեր:

1995թվականից Հայաստանում ապրիլի 7-ը նշվում է որպես Մայրության և գեղեցկության օր՝ մեր տոնացույցում ավելացնելով ոչ թե սոսկ ևս մեկ տոնական օր, այլ մեր մայրերին գովաբանելու, մեր երախտիքը հայտնելու լրացուցիչ մի գեղեցիկ առիթ: Ամեն տարի ապրիլի 7-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին նշում է Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը, ինչը լրացնում է այն խորհուրդը, որ մեր ժողովուրդը դրել է մայրերին ուղղված սիրո, հարգանքի և մեծարանքի հիմքում:

«Մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը». Գարեգին Նժդեհի այս խոսքերը միշտ արդիական են ու այսօր, ինչպես միշտ, մայրերի դերը առանցքային է ընտանիքների ամրացման, կայացման և երկրի հզորացման գործում: Ուստի սիրելի կանայք, սիրելի մայրեր, Ձեզ առողջություն, կանացի և մայրական անափ երջանկություն: Միշտ եղեք կենսախինդ, ուրախ՝ շրջապատված Ձեր ընտանիքներով:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ